Տպագրված է ընդամենը երկու օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԶԻՆԳԱՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2025թ-ի օգոստոսի 7-ի արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ

Նախագահ՝

Արման Բաղիկյան

Օրինակ - 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«27» սեպտեմբերի 2021 թ.

Գրանցման համար՝ 211.171.1197262

Հարկ վճարողի հաշվառման համար՝ 00243438

19.02.2025թ. գրանցված կանոնադրության թիվ____ փոփոխությունը

Գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից

« 09 » 09 2025թ.

աշխատակից

__________ / __________

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԶԻՆԳԱՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի լիզինգատուների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության տարածքում լիզինգ իրականացնելու իրավունք ունեցող բանկերի և/կամ վարկային կազմակերպությունների, մատակարար կազմակերպությունների, ինչպես նաև լիզինգի իրականացման գործընթացում ուղղակի և/կամ անուղղակի մասնակցություն ունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկերում ՀՀ դրամով և արտարժույթով հաշիվներ, իր անվանումով կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), խորհրդանիշ, ինչպես նաև դրոշմակնիք և խորհրդանիշով ձևաթուղթ:

3. Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար, իսկ Կազմակերպության անդամները պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների համար:

4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5. Կազմակերպության լրիվ անվանումն է՝

Հայերեն՝ «Հայաստանի Լիզինգատուների Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն,

Ռուսերեն՝ «Ассоциация Лизингодателей Армении» общественная организация,

Անգլերեն՝ “Lessors’ Association of Armenia” non-governmental organization.:

6. Կազմակերպության կրճատ անվանումն է՝

Հայերեն՝ «Հայաստանի Լիզինգատուների Ասոցիացիա» ՀԿ,

Ռուսերեն՝ «Ассоциация Лизингодателей Армении» ОО,

Անգլերեն՝ “Lessors’ Association of Armenia” NGO.

7. Կազմակերպության անվանման հապավումն է՝

Հայերեն՝ «ՀԼԱ» ՀԿ,

Ռուսերեն՝ «АЛА» ОО,

Անգլերեն՝ “LAA” NGO.

8. Կազմակերպության գտնվելու վայրն է ՀՀ, քաղաք Երևան, Վ. Վաղարշյան 12/11 տարածք, հեռախոս՝ +37444700052, էլ. հասցե info@leaseunion.am:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

9. Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

1) Հայաստանի լիզինգատուների շահերը ներկայացնելը, երաշխավորելը և պաշտպանելը՝ լիզինգին առնչվող ոլորտներում պետական քաղաքականություն մշակող, իրականացնող և այլ մարմիններում,

2) Հայաստանի Հանրապետության տնտեսության առանձնահատկություններին համապատասխան և ի նպաստ տնտեսության

զարգացման լիզինգի իրականացման համար բարենպաստ պայմաններ մշակելը, դրանք լիզինգին առնչվող ոլորտներում պետական քաղաքականություն մշակող, իրականացնող և այլ մարմիններում ներկայացնելը,

3) Հայաստանի Հանրապետությունում լիզինգի և դրա իրականացման վերաբերյալ ճանաչողությունը և իրազեկվածությունը բարձրացնելը,

4) Միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում լիզինգին առնչվող ծրագրեր իրականացնելուն նպաստելը:

10. Կազմակերպության գործունեության առարկան օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) Նպաստել լիզինգի իրականացման համար բարենպաստ գործունեության միջավայրի ձևավորմանը,

2) Ներկայացնել Կազմակերպության անդամների իրավունքներն ու շահերը այլ անձանց, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում,

3) Վերհանել և բացահայտել Կազմակերպության անդամների, ինչպես նաև լիզինգի իրականացման գործընթացում ներգրավված բոլոր անձանց խնդիրները, դրանք համակարգել, վերլուծել և առաջարկել արդյունավետ լուծումներ,

4) Բացահայտել լիզինգի իրականացմանն առնչվող ոլորտներում առկա խնդիրները, կատարել մասնագիտացված կազմակերպչական, մեթոդոլոգիական, իրավական վերլուծություն և իրավասու մարմիններին ներկայացնել այդ խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ,

5) Ներպետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպություններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ներկայացնել լիզինգի ֆինանսատնտեսական առանձնահատկությունները, առավելություններն ու արդյունավետությունը՝ բարձրացնելով լիզինգի վերաբերյալ իրազեկվածությունն ու ճանաչողությունը,

6) Կազմակերպել լիզինգին նվիրված համագումարներ, համաժողովներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ, դասընթացներ և այլ հավաքույթներ՝ նպաստելով լիզինգի վերաբերյալ իրազեկվածության և ճանաչողության բարձրացմանը,

7) Համագործակցել ներպետական, արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց հետ՝ կազմակերպելով փորձի փոխանակմանն ուղղված համագումարներ, աշխատաժողովներ, քննարկումներ և այլ հավաքույթներ,

8) Մշտադիտարկել արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների կողմից լիզինգին առնչվող նորարարությունների ներդրմանը, դրանց վերաբերյալ առաջարկները՝ համակարգելով և կատարելով անհրաժեշտ մասնագիտացված վերլուծություն,

9) Մշտադիտարկել լիզինգի իրականացման գործընթացը կարգավորող օրենսդրությունն ու այլ իրավական ակտերը՝ կատարելով անհրաժեշտ մասնագիտացված վերլուծություն և իրավասու մարմինների ներկայացնել դրա բարեփոխման համար անհրաժեշտ առաջարկներ,

10) Լուսաբանել լիզինգի գործընթացը, դրան առնչվող ոլորտները նեղ մասնագիտական տեսանկյունից, հավաքագրել և ձևավորել անհրաժեշտ վիճակագրական տեղեկություններ,

11) Խթանել լիզինգ իրականացնող կազմակերպությունների ավելացմանը, լիզինգի իրականացման ոլորտների ավելացմանը, ձևավորել լիզինգ իրականացնելու նոր ոլորտներ,

12) Նպաստել շուկայում Կազմակերպության անդամների շահերի բախման հնարավոր իրավիճակների նվազեցմանը, ձևավորել գործընկերային, համագործակցային և փոխշահավետ գործնական միջավայր,

13) Նպաստել Հայաստանի Հանրապետությունում լիզինգի որպես ՀՆԱ-ի մակարդակի ավելացման վրա ազդող գործիքի առնչությամբ հարկային արտոնությունների ներդրմանը՝ խթանելով ՀՀ տնտեսության զարգացմանը:

11. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելիս Կազմակերպությունն իր գործունեությունը կառուցում է օրինականության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամության կամավորության, անդամների շահերի ընդհանրության, ինքնակառավարման և հաշվետվողականության սկզբունքների հիման վրա:

12. Իր գործունեությունն իրականացնելիս Կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

13. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներն իրագործելու համար իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

14. Կազմակերպության անդամ կարող է դառնալ լիզինգ իրականացնելու իրավունք ունեցող բանկը և/կամ վարկային կազմակերպությունը, մատակարար կազմակերպությունը, ինչպես նաև լիզինգի իրականացման գործընթացում ուղղակի և/կամ անուղղակի մասնակցություն ունեցող անձը, ով ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը: Ֆիզիկական անձը կարող է Կազմակերպության անդամ դառնալ, եթե լրացել է նրա 18 տարին:

15. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին: Կազմակերպության Նախագահը Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձի դիմումի հիման վրա հնգօրյա ժամկետում նախաձեռնում է Կազմակերպության արտահերթ ընդհանուր ժողով՝ Կազմակերպությանը անդամակցելու դիմումը բավարարելու կամ մերժելու հարցը լուծելու համար: Կազմակերպությանը անդամակցելու և անդամակցությունից հեռացնելու, ինչպես նաև կարգապահական

պատասխանատվության ենթարկելու իրավասությունը Կազմակերպության ընդհանուր ժողովինն է՝ հաշվի առնելով Կազմակերպության գործունեության սկզբունքների, առարկայի և նպատակների հիման վրա այդ անձի անդամակցության նպատակահարմարությունը:

16. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող իրավաբանական անձի դիմումը ստորագրում է այդ իրավաբանական անձի կանոնադրությամբ համապատասխան իրավասություն ունեցող անձը: Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող իրավաբանական անձը դիմումին կից ներկայացնում է նաև բարձրագույն կառավարման մարմնի համապատասխան որոշումը: Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձը դիմումը ստորագրում է անձամբ կամ դրա համար լիազորված անձի միջոցով:

17. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության Կազմակերպության կանոնադրության, ներքին իրավական ակտերի և/կամ Կազմակերպության կառավարման մարմինների այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ: Կազմակերպության Նախագահը նման հանգամանքի մասին իրազեկվելուց հետո հնգօրյա ժամկետում նախաձեռնում է Կազմակերպության արտահերթ ընդհանուր ժողով Կազմակերպության անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Կազմակերպության անդամը Կազմակերպության կանոնադրության, ներքին իրավական ակտերի և/կամ Կազմակերպության կառավարման մարմինների այլ իրավական ակտերի պահանջները խախտելու, ինչպես նաև Կազմակերպության անդամ հանդիսանալու հետ անհամատեղելի վարքագիծ /գործողություն և/կամ անգործություն/ դրսևորելու համար կարող է հեռացվել Կազմակերպությունից Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ: Կազմակերպության Նախագահը նման հանգամանքի մասին իրազեկվելուց հետո հնգօրյա ժամկետում նախաձեռնում է Կազմակերպության արտահերթ ընդհանուր ժողով Կազմակերպության անդամին Կազմակերպությունից հեռացնելու հարցը լուծելու համար:

18. Կազմակերպության անդամների անդամավճարների չափը, վճարման ժամկետները, դրանց գանձումը կազմակերպելու կարգը սահմանվում են Կազմակերպության Նախագահի առաջարկությամբ՝ ժողովի կողմից:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Կազմակերպությունն իրավունք ունի՝

1) Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ՝ որպես հայցվոր կամ պատասխանող,
2) Բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ՀՀ դրամ և/կամ արտարժույթով,
3) Ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից,
4) Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ,

5) Օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
6) Համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև այդ կազմակերպությունների հետ ստեղծել կամ անդամակցել նրանց կողմից ստեղծված հասարակական կազմակերպությանը,
7) Թղթակցել այլ կազմակերպությունների, ինչպես նաև ունենալ թղթակից անդամներ,
8) Իրացնել օրենսդրությամբ չարգելված այլ իրավունքներ:

20. Կազմակերպությունը պարտավոր է՝
1) Վարել իր անդամների հաշվառման գրանցամատյան,
2) Օրենքով նախատեսված դեպքում և կարգով ենթարկվել պարտադիր աուդիտի,
3) Օրենքով սահմանված դեպքում և կարգով իրավասու մարմիններին տրամադրել հաշվետվություններ և այլ փաստաթղթեր,
4) Կազմակերպության անդամի կողմից նման պահանջ ստանալուց հետո 5-օրյա ժամկետում տրամադրել նրան սույն Կանոնադրությանը, Ժողովի, Նախագահի որոշումների լուսա/պատճենները,
5) Ապահովել օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հրապարակայնությունը,
6) Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում,
2) ներկա գտնվել Ժողովին՝ ֆիզիկական անձանց դեպքում անձամբ, իսկ իրավաբանական անձանց դեպքում նրանց անունից հանդես գալու իրավունք ունեցող անձանց միջոցով, այդ թվում՝ լիազորագրի հիման վրա,
3) ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, ներքին իրավական ակտերին, կառավարման մարմինների որոշումներին և ստանալ դրանց պատճենները, բացառությամբ օրենքով և/կամ այլ ակտով գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի,
4) Կազմակերպության Նախագահի սահմանած կարգով օգտվել Կազմակերպության ծառայություններից,
5) Կազմակերպության Նախագահի որոշումները դրանց ընդունման պահից մեկ ամսվա ընթացքում բողոքարկելու Կազմակերպության Ժողովին: Կազմակերպության ժողովի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով,

6) Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,
7) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

22. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,
2) բարեխղճորեն կատարել Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ և/կամ Կազմակերպության ներքին իրավական ակտերով իր վրա դրված պարտականությունները,
3) Սահմանված ժամկետներում և չափերով վճարել անդամավճարը,
4) Պահպանել Կազմակերպության առևտրային և այլ գաղտնիքները,
5) Պահպանել գործարար էթիկայի կանոնները, աջակցել Կազմակերպության հեղինակության, համբավի բարձրացմանը և Կազմակերպության անդամների միջև համագործակցության ամրապնդմանը,
6) Կատարել իր վրա դրված այլ պարտականություններ:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

23. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

24. Կազմակերպության գույքը ձևավորվում է՝
1) Կազմակերպության անդամների ներդրումներից,
2) Կազմակերպության անդամների վճարումներից (անդամավճարներից),
3) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից,
4) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպությունից ստացված միջոցներից,
5) նվիրաբերություններից և դրամաշնորհներից,
6) հանգանակություններից,
7) օրենքով չարգելված այլ միջոցներից:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ ընդհանուր ժողովը և Կազմակերպության նախագահը:

26. Կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը գումարվում է յուրաքանչյուր տարին մեկ անգամ: Ընդհանուր ժողովը նախագահում է Կազմակերպության

նախագահը: Ընդհանուր ժողովը կարող է անցկացվել առկա կամ հեռակա կարգով՝ Կազմակերպության Նախագահի առաջարկությամբ Ժողովի սահմանած ձևով: Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցել է Կազմակերպության անդամների կեսից ավելին:

27. Կազմակերպության արտահերթ ժողով հրավիրվում է Կազմակերպության նախագահի կամ Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ վերստուգիչ հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Կազմակերպության նախագահի կողմից:

28. Կազմակերպության հերթական կամ արտահերթ ժողովի օրակարգի, նրա աշխատանքի ժամանակի և վայրի մասին անդամները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ Կազմակերպության անդամի ներկայացրած հեռահաղորդակցության կապի միջոցով ոչ ուշ, քան Ժողովի անցկացման օրվանից հինգ օր առաջ:

29. Ժողովի արձանագրությունները ստորագրում են Կազմակերպության նախագահը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները և Կազմակերպության հաշվետվությունները պահպանվում են հինգ տարի ժամկետով:

30. Ժողովն ունի Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերջնական լուծման վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք: Մասնավորապես, Ժողովն իրավասու է՝

1) Կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը,
2) Հաստատելու Կազմակերպության կառուցվածքը,
3) Որոշումներ ընդունելու Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,
4) Հաստատելու Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների տարեկան բյուջեները, դրանց գործունեության արդյունքները,
5) Ստեղծելու այլ իրավաբանական անձ, հաստատելու դրա կանոնադրությունը, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին,
6) Ընտրելու Կազմակերպության գործադիր մարմին (Կազմակերպության նախագահ),
7) Սահմանելու Կազմակերպության նախագահի վարձատրության կարգն ու չափը,
8) Քննարկելու Կազմակերպության նախագահի որոշումների դեմ բերված բողոքները և դրա վերաբերյալ կայացնել որոշում,
9) Դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը,
10) Հավանություն տալու Կազմակերպության կողմից Կազմակերպության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը գերազանցող արժեքով գործարքների (խոշոր գործարքների) կատարմանը,

11) Կազմակերպությունը պարտադիր աուդիտի ենթակա լինելու օրենքով նախատեսված դեպքում ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին),
12) Անհրաժեշտության դեպքում հաստատելու Կազմակերպության ռազմավարությունը,
13) Երեք տարին մեկ անգամ հաստատելու գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները,
14) Լուծում է Կազմակերպությանը անդամակցելու դիմումը բավարարելու կամ մերժելու հարցը,
15) Լուծում է Կազմակերպության անդամին պատասխանատվության ենթարկելու հարցը,
16) Լուծում է Կազմակերպության անդամին Կազմակերպությունից հեռացնելու հարցը,
17) Ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին,
18) Ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի,
19) Նախագահի առաջարկությամբ սահմանում է անդամավճարների չափը և գանձման կարգը,
20) Ընտրելու Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամներին (վերստուգողին), վաղաժամկետ դադարեցնելու նրանց լիազորությունները, սահմանելու վերստուգիչ հանձնաժողովի քանակական կազմը:
21) Իրականացնելու օրենքով նախատեսված այլ լիազորություններ

31. Սույն կանոնադրության 30-րդ կետով նախատեսված լիազորությունների կապակցությամբ Ժողովն ընդունում է որոշումներ: Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի սույն կանոնադրության 30-րդ կետով նախատեսված լիազորությունների կապակցությամբ հարցերը նախաձեռնում և Ժողովի քննարկման են ներկայացնում Կազմակերպության նախագահը կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդը:

32. Կազմակերպության նախագահն ընտրվում է ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության նախագահը ղեկավարում է Կազմակերպության ընթացիկ գործունեությունը, վարում է ժողովի նիստերը:

33. Կազմակերպության նախագահի իրավասությանը վերապահված են Կազմակերպության ընթացիկ գործունեության, կառավարման և ղեկավարման, ինչպես նաև դրանց կատարումն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

34. Կազմակերպության նախագահը օրենսդրությանը, սույն Կանոնադրությանը և/կամ Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի, ինչպես նաև տալիս է լիազորագրեր,
2) Գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
3) Ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

4) Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, ներքին իրավական ակտեր, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
5) Մշակում է Կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները,
6) Ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում, միջազգային կազմակերպություններում և օտարերկրյա պետություններում,
7) Ներկայացնում է Կազմակերպության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ներպետական և միջազգային կազմակերպություններում, հանդես է գալիս Կազմակերպության նպատակներից և գործունեության առարկայից բխող առաջարկություններով և հայտարարություններով,
8) Որոշում է Կազմակերպության անդամակցությունը ներպետական կամ միջազգային կազմակերպություններին, կրթական ծրագրերին, ասոցիացիաներին, այլ հասարակական միավորումներին,
9) Տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույք, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,
10) Բանկերում բացում և կառավարում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվները,
11) Հաստատում է Կազմակերպության և նրա առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների աշխատանքային կանոնակարգերը, կառուցվածքը, հաստիքացուցակը, դրանց դրույքաչափերը, վարձատրության պայմանները,
12) Կայացնում է Կազմակերպության, ինչպես նաև Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների աշխատակիցների, այդ թվում ղեկավարների աշխատանքի ընդունման կամ ազատման մասին անհատական իրավական ակտեր, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման կամ կարգապահական պատասխանատվության միջոցներ,
13) Սահմանում է Կազմակերպության անդամների կողմից Կազմակերպության ծառայություններից օգտվելու հիմքերն ու կարգը,
14) Հանդես է գալիս Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի նախաձեռնությամբ,
15) Նախաձեռնում է Կազմակերպության անդամների արտահերթ ժողով,
16) Իրականացնում է օրենքով և/կամ սույն Կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև ժողովի կողմից տրված այլ լիազորություններ:

35. Կազմակերպության Նախագահի իրավասությանն է պատկանում նաև ժողովի բացառիկ իրավասությանը չվերապահված ցանկացած հարց:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՈՒՏԻԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

36. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը /վերստուգող/ ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովի քանակական կազմը

սահմանվում է Ժողովի կողմից: Կազմակերպության ղեկավար մարմնի անդամը չի կարող ընտրվել վերստուգիչ հանձնաժողովում:

37. Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքները իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության նախագահի պահանջով:

38. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերահսկող մարմինը վերստուգողն է, ապա նա որոշումներն ընդունում է միանձնյա:

39. Կազմակերպության վերստուգիչ հանձնաժողովի անդամները Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել: Նշված անձանց վարձատրության մասին որոշումը և չափը սահմանվում է Ժողովի կողմից:

40. Վերստուգիչ հանձնաժողովը կարող է Կազմակերպության նախագահից և այլ ղեկավար պաշտոնատար անձանցից ստուգում իրականացնելու նպատակով պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:

41. Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման վերաբերյալ հաշվետվությունները Ժողովի հաստատմանն են ներկայացվում դրանց վերաբերյալ վերստուգիչ հանձնաժողովի եզրակացության հետ միասին:

42. Վերստուգիչ հանձնաժողովը պարտավոր է՝

1) Տարին մեկ անգամ կատարել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ստուգում՝ հաջորդ տարվա առաջին եռամսյակի ընթացքում,
2) Ժողովի որոշմամբ կամ Կազմակերպության անդամների 10 տոկոսի պահանջով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ արտահերթ ստուգել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությունը,
3) Ստուգել Կազմակերպության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, Կանոնադրությանը, ժողովի որոշումներին և ներքին ակտերին, անհրաժեշտության դեպքում պահանջել Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, պարտադիր քննարկման հարցերի վերաբերյալ և առաջարկություններ ներկայացնել Կազմակերպության կառավարման մարմիններին.
4) Ստուգման արդյունքում կազմել հաշվետվություններ և ներկայացնել ժողովին՝ Կազմակերպության գործունեության, ֆինանսական հաշվետվությունների, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին.
5) Եզրակացություններ ներկայացնել ժողովին՝ Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների վերաբերյալ.
6) Տեղեկացնել ժողովին հայտնաբերված խախտումների մասին.

7) Ապահովել ստացված տվյալների գաղտնիությունը և գործել անկողմնակալ:
8) Գործունեության ընթացքում ղեկավարվել ՀՀ օրենսդրությամբ, սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև ժողովի որոշումներով:

43. Սույն կանոնադրության 41-րդ կետով նախատեսված հաշվետվությանը կից ներկայացվող վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունն առնվազն պետք է պարունակի տվյալներ՝

1) Կազմակերպության գույքի և ստացման աղբյուրների մասին.
2) Կազմակերպության իրականացրած ծրագրերի և դրանց արդյունավետության մասին.
3) ծրագրերի իրականացման ընթացքում ծախսված միջոցների վերաբերյալ:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

44. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

45. Ժողովը կազմավորում (նշանակում) է լուծարման հանձնաժողով (լուծարող) և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

46. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Կազմակերպության ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրության փոփոխությունը ընդունված է 07.08.2025թ կազմված է 15.08.2025թ-ին և բաղկացած է 12 թերթից: